ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1569

21.08.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի օգոստոսի 14-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Հրազդանի ՁՊՎ և արձանագրվել էին հետևյալ թերությունները և խախտումները.

Թերություն՝

1. Բուժսենյակի բարձի երեսը գտնվում էր կեղտոտ վիճակում:

Խախտումներ՝

1. <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 9-րդ աղյուսակում շարժի վերաբերյալ ժամերը չի նշվում, որի արդյունքում հնարավոր չի լինում պարզել, թե ե՞րբ է անձը դուրս եկել ՁՊՎ-ից և տեղափոխվել համապատասխան այլ հաստատություն:
2. Աշոտ Ռուբենի Ամիրջանյանը բերման է ենթարկվել 06.03.2015թ-ին ժամը 10.00-ին, ըստ Ձեր պնդումների և ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման գրանցամատյանի՝ ձերբակալվել է ժամը 13.20-ին: Խցից դուրս է բերվել և ընդհանուր իրավասության դատարան է տեղափոխվել խափանման միջոցի հարցը քննարկելու նպատակով 09.03.2015թ-ին ժամը 10.30-ին՝ արդեն իսկ ձերբակալման առավելագույն 72 ժամը լրացած:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՍՀ № 3951
26 08 2015 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄՏՍՀ № 5629
26 08 15

ՀՀ, Երևան, 0090 Հանրապետության 60
Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 52 81 87

Ավելացնենք նաև, որ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում անհասկանալի պատճառով Ա. Ամիրջանյանին 09.03.2015թ-ի խցից դուրս բերելու ժամի գրառումը ջնջվել է. փոխվել է՝ 10.35-ը սարքվել է 10.30:

3. ՁՊՎ մուտք գործած փաստաբանների վերաբերյալ ոչ մի գրառում չի կատարվում <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում, միայն բանավոր մեկնաբանվեց, որ քննիչի հետ է ներկայանում փաստաբանը, դրա համար գրառում չենք կատարում, որը ոչ բավարար մեկնաբանություն է:

4. Ռաֆիկ Վազգենի Առաքելյանը ձերբակալվել է 20.06.2015թ-ին ժամը 23.30-ին: ՁՊՎ է ընդունվել 21.06.2015թ-ին ժամը 00.05-ին: Ըստ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>>գրանցամատյանի՝ 21.06.2015թ-ին ժամը 00.15-ին հրավիրվել է շտապ օգնություն, նրա մոտ արձանագրվել է <<դեմքի և կրծքավանդակի ձախ կեսի քերծվածքներ, կապտուկներ>>: Կրկին՝ 22.06.2015թ-ին ժամը 21.55-ին հրավիրվել է շտապ օգնություն և արձանագրվել է՝ <<կրծքավանդակի ձախ կեսի սալջարդ, աջ ակնակապճային շրջանի սալջարդ և այլն, և ունի համապատասխան մասնագետի կոնսուլտացիայի կարիք>>: Խնդրում ենք ուշադրություն դարձնել արձանագրված երկու մարմնական վնասվածքների տարբերություններին: Ավելացնենք նաև, որ նշված անձը ունեցել է կողոսկրերի կոտրվածքներ և այդ վիճակում 21.06.2015թ-ի ժամը 00.15-ից մինչև 23.06.2015թ-ի ժամը 20.40-ը պահվել է ՁՊՎ-ում և միայն երկու անգամ հրավիրվել է շտապ օգնություն, որը միայն ցավազրկող է ներարկել, ավել ոչ մի օգնություն չի ցուցաբերվել:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3119 << 22 >> 09 2015թ.

Ձեր 21.08.2015թ. թիվ 2621/1569 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ օգոստոսի 14-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Կոտայքի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Բուժսենյակի բարձի երեսը, ինչպես նաև բոլոր խցերի սպիտակեղենը գտնվում են մաքուր վիճակում:

Խախտումներ.

1. <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 9-րդ սյունակը պահանջում է նշել տեղեկություն ձերբակալվածի տեղաշարժի (օրինակ, թե որ ՔԿՀ է տեղափոխվել) վերաբերյալ, իսկ ձերբակալվածներին ՁՊՎ-ի խցերից դուրս բերելու օրն ու ժամը նշվում է <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի 5-րդ սյունակում:

2. Ա.Ամիրջանյանը ոստիկանության Հրազդանի բաժին բերման է ենթարկվել 06.03.2015թ. ժամը 10.40-ին, այլ ոչ թե 06.03.2015թ. ժամը 10.00-ին: Վերջինս ձերբակալվել է նույն օրը ժամը 13.20-ին և ընդունվել ՁՊՎ: 09.03.2015թ. ժամը 10.30-ին Ա.Ամիրջանյանը դուրս է բերվել ՁՊՎ-ից և տեղափոխվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որտեղ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

<<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի 56-րդ հերթական համարի ներքո գրանցված է, որ Ա.Ամիրջանյանը 09.03.2015թ. ժամը 10.30-ին խցից դուրս է բերվել՝ դատարան տեղափոխելու համար: Գրանցամատյանի 5-րդ սյունակում եթե նույնիսկ գրված լիներ ժամը 10.35, ապա այդ դեպքում նույնպես չի խախտվել ձերբակալման առավելագույն 72 ժամը:

3. Ոստիկանության Հրազդանի բաժնի ՁՊՎ-ում պահվող անձանց մոտ փաստաբանները մուտք են գործել ընդամենը 2 անգամ, քննիչների հետ միասին, վերջիններիս կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա, որոնց վերաբերյալ գրառումներ են կատարվել <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի 184 և 218 հերթական համարների 4-րդ սյունակներում:

4.Ռ. Առաքելյանը ձերբակալվել է 20.06.2015թ. ժ.23.30-ին, իսկ ՁՊՎ ընդունվել 21.06.2015թ. ժ.00.05-ին: Վերջինիս մարմնի վրա հայտնաբերված վնասվածքները արձանագրելու նպատակով 21.06.2015թ. ժ.00.15-ին հրավիրվել է Հրազդանի շտապ օգնության բժիշկ, որը զննել է ձերբակալվածին, ցույց տվել բուժօգնություն և <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանի 6-րդ սյունակում արձանագրել <<Դեմքի և կրծքավանդակի ձախ կեսի քերծվածքներ, կապտուկներ>> մարմնական վնասվածքները, որի մասին իրազեկվել է վարույթն իրականացնող մարմնին և դատախազին: 22.06.2015թ Կոտայքի մարզային քննչական վարչության գրության հիման վրա Ռ. Առաքելյանը ժամը 14.05-ին տեղափոխվել է<<Հրազդանի ԲԿ>> ՓԲԸ՝ դատաբժշկական փորձաքննության և ժամը 15.15-ին վարադարձել ոստիկանության Հրազդանի բաժնի ՁՊՎ: 22.06.2015թ-ին ժամը 21.55-ին Ռ.Առաքելյանի մոտ առաջացած ցավերի պատճառով կրկին հրավիրվել է շտապ օգնության բժիշկ, որի կողմից ձերբակալվածին ցուցաբերվել է օգնություն <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանի 6-րդ սյունակում արձանագրել <<Կրծքավանդակի ձախ կեսի սալջարդ, աջ ակնակապճային շրջանի սալջարդ, ստորին վերջույթների սուր թրոմբոֆլեմբից ախտորոշումը ճշտելու համար կարիք ունի անոթային վիրաբույժի կոնսուլտացիայի>>: Հրավիրված երկու բժիշկների կողմից կողոսկրների կոտրվածքների վերաբերյալ ոչ մի գրառում չի կատարվել: Դրանց վերաբերյալ նշվել է միայն դատաբժշկական փորձաքննության 24.06.2015թ. եզրակացության մեջ և այդ ժամանակ Ռ.Առաքելյանը արդեն իսկ գտնվել է ազատության մեջ:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ